ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարություն

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին կից հասարակական խորհրդի կազմը լրացնելու գործընթացի մասին

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին կից գործող **հասարակական խորհրդի** /այսուհետ՝ խորհուրդ/ անդամների լրացման նպատակով, հայտարարում է հավակնորդների դիմումների և փաստաթղթերի ընդունման գործընթացի մեկնարկը՝ **24.02.2022 թ**.:

Խորհրդի հավակնորդ անդամների ներկայացվող պահանջները.

1. Խորհրդի կազմում կարող են ընդգրկվել 1) Հասարակական կազմակերպություններ, զանգվածային լրատվության միջոցներ, ազգային փոքրամասնություններ ներկայացնող կազմակերպություններ, ինչպես նաև այլ շահագրգիռ անձինք, որոնց գործունեության բնույթը համընկնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության /այսուհետ՝ նախարարություն/ գործունեության հիմնական ուղղություններին:

2) Համապատասխան ոլորտում ունեն առնվազն 2 տարվա մասնագիտական փորձառություն (իրականացրել կամ մասնակցել են ոլորտին առնչվող ծրագրերի փորձագիտական աշխատանքների իրականացմանը, ունեն ոլորտին առնչվող հրապարակումներ, մասնակցել են նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբերի, հանձնաժողովների աշխատանքներին, ոլորտին առնչվող հարցերով համագործակցել են միջազգային կազմակերպությունների հետ և այլն) և որոնց մասնակցությունը Խորհրդի աշխատանքներին կարող է նպաստել Խորհրդի առջև դրված խնդիրների և նպատակների առավել արդյունավետ իրականացմանը:

Խորհրդի հավակնորդ անդամները նախարարություն են ներկայացնում.

1) **Դիմում՝** խորհրդի կազմում ընդգրկվելու համար /դիմումի օրինակելի ձևը կցվում է/:

2) Տեղեկատվություն և /կամ/ փաստաթղթեր սույն հայտարարության 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջների համապատասխանությունը հիմնավորելու համար:

Հետաքրքրված անձինք փաստաթղթերը կարող են ներկայացնել առձեռն և առցանց տարբերակով: Առձեռն փաստաթղթերը ներկայացվում են նախարարություն ամեն օր՝ մինչև 24.03.2022թ ներառյալ (բացառությամբ շաբաթ և կիրակի) ժամը 9:15-17:30, Երևան 0010, Հանրապետության Հրապարակ, կառավարական տուն N3 հասցեով: Առցանց տարբերակով հայտերն ուղարկել public.councilmtai@gmail.com էլ հասցեին՝ մինչև 24.03.2022թ ժամը 18:00–ն: Հարցերի դեպքում զանգահարել՝ (010) 515 314 հեռ. համարին: Նշված ժամկետից հետո ներկայացված փաստաթղթերը չեն ընդունվում: Խարհրդի աշխատակարգը հրապարակված է նախարարության պաշտոնական կայքէջում:

ՀՀ տարածքային կառավարման

և ենթակառուցվածքների նախարար

---------- ----------ին

---------- կազմակերպության
/կազմակերպության անվանումը/

ներկայացուցիչ /անձ/ ----------ից
/անուն, ազգանուն/

---------- հեռ.

---------- էլեկտրոնային հասցե

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն նախարար

Ձեզ ենք ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին կից գործող հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար:

Առդիր՝ ----- թերթ:

1. ----------
2. ----------
3. ----------
4. ----------
5. ----------
6. ----------
7. ----------

----------/ստորագրություն/
/անուն, ազգանուն/

----------/դիմումի
ներկայացման ամսաթիվ/